2011 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը[1]

«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար կառավարության որոշումներով բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները ներառյալ 2011 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են ավելի քան 552.1 մլրդ դրամ, որից հարկային եկամուտները և պարտադիր սոցիալական ապահովության վճարները համապատասխանաբար շուրջ 430 մլրդ դրամ և 82 մլրդ դրամ՝ ապահովելով ութ ամիսների համար կանխատեսվող ցուցանիշների ամբողջական կատարումը և 88%-ով ՀՀ կառավարության իննամսյա ծրագիրը, իսկ ծախսերը՝ 566.9 մլրդ դրամ՝ ապահովելով պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնած պարտավորությունների ամբողջական և ՀՀ կառավարության իննամսյա ծրագրի 81.1% կատարողական: Առանց արտաբյուջետային միջոցների եկամուտները կազմել են շուրջ 539.6 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 556.2 մլրդ դրամ:

<u>ՀՀ պետական բյուջեի եկամուտները</u>

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 9.7%-ով կամ 48.8 մլրդ դրամով, որն ապահովվել է հարկերի ու տուրքերի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների և պաշտոնական դրամաշնորհների հաշվին, որոնք համապատասխանաբար 10%-ով (շուրջ 46.5 մլրդ դրամով) և 2.2 անգամ (շուրջ 6.9 մլրդ դրամով) գերազանցել են նախորդ տարվա

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

համապատասխան ցուցանիշները: Հաշվետու ժամանակահատվածում այլ եկամուտները նվազել են 14%-ով կամ 4.5 մլրդ դրամով:

Պետական բյուջեի եկամուտների 92.7%-ը ձևավորվել է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 5%-ը՝ այլ եկամուտների, 2.2%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին: Պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են շորջ 12.6 մլրդ դրամ կամ ինն ամսվա համար ծրագրված մուտքերի 81.8%-ը:

2011 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 430 մլրդ դրամ հարկային եկամուտներ ու պետական տուրքեր, որոնք կազմել են իննամսյա ծրագրի 88.6%-ը: Նշված գումարից 947.3 մլն դրամ կազմել են արտաբյուջետային հաշիվներին մուտքագրված հարկային եկամուտները, որոնց իննամսյա կատարողականը կազմել է 54.7%: Այսինքն՝ հարկերի ու տուրքերի կատարողականի ցուցանիշի վրա բացասական ազդեցություն է գործել արտաբյուջետային մուտքերի ցածր կատարողականը: Առանց արտաբյուջետային մուտքերի պետական բյուջեի հարկերի ու տուրքերի կատարողականը կազմում է 88.7%:

2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 10%-ով կամ շուրջ 39.1 մլրդ դրամով: Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, եկամտահարկի և մաքսատուրքի աճով:

Հարկերի և տուրքերի 49.3%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է 212.1 մլրդ դրամ և 8%-ով կամ 15.6 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից շուրջ 135.9 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, շուրջ 76.3 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից:

Պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 5.6%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով ավելի քան 24 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 16.8 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ շուրջ 7.3 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների 16.2%-ը ձևավորվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով շուրջ 69.8 մլրդ դրամ: Նախորդ

տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 30.5%-ով կամ 16.3 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 52.5 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 12.2%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 9.5%-ով կամ շուրջ 4.6 մլրդ դրամով:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են 24.4 մլրդ դրամ կամ հարկերի և տուրքերի 5.7%-ը և 20.7%-ով կամ շուրջ 4.2 մլրդ դրամով գերազանցել 2010 թվականի համապատասխան ցուցանիշը:

2011 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 13.9 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով իննամսյա ծրագրի 85.8%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն աճել են 7.8%-ով կամ 1 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում գործունեության առանձին տեսակներից գանձվել են շուրջ 13.8 մլրդ դրամ հաստատագրված վճարներ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 3.2%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 7.9%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է գործունեության որոշ տեսակների՝ հարկման ընդհանուր դաշտ անցնելու հանգամանքով:

2011 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 8.3 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 39.6%-ով կամ շուրջ 2.4 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու և օգտակար հանածոների արդյունահանման համար գանձվող վճարների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել 11.1 մլրդ դրամի այլ հարկեր: Մասնավորապես՝ 4.3 մլրդ դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 2.1 մլրդ դրամ՝ ճանապարհային վճարները, 1.6 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) վճարները, 853.1 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 720 մլն դրամ՝ ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օղու ներմուծման թույլտվության

համար սակագնային քվոտայի վճարը, շուրջ 315.7 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 220.2 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, շուրջ 31.3 մլն դրամ՝ արտոնագրային վճարները և 947.3 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն աճել է 31.2%-ով կամ 2.6 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարների և ռոյալթիի աճով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են շուրջ 82 մլրդ դրամ՝ 88.4%-ով ապահովելով իննամսյա կանխատեսված ցուցանիշը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 9.9%-ով կամ շուրջ 7.4 մլրդ դրամով:

2011 թվականի հունվար- օգոստոս ամիսների ընթացքում դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում մուտքագրվել է 12.4 մլրդ դրամ կամ իննամսյա ծրագրով նախատեսվածի 59.4%-ը, որից շուրջ 11.3 մլրդ դրամը ստացվել է Եվրոմիության աջակցության շրջանակներում: Ավելի քան 1.1 մլրդ դրամ է մուտքագրվել պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ կազմելով ծրագրով նախատեսվածի 93.6%-ը, առանց որի պաշտոնական դրամաշնորհները կազմել են իննամսյա ծրագրով նախատեսվածի 57.3%-ը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ստացված դրամաշնորհներն աճել են 2.2 անգամ կամ շուրջ 6.9 մլրդ դրամով:

2011 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են շուրջ 27.8 մլրդ դրամ՝ 97.9%-ով ապահովելով իննամսյա ծրագրային ցուցանիշը: Նշված գումարից 10.5 մլրդ դրամը կազմել են ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները, որոնց ծրագիրը կատարվել է 84.4%-ով: Առանց վերջիններիս այլ եկամուտների հունվար-օգոստոսի փաստացի ցուցանիշի գծով արձանագրվել է իննամսյա ծրագրի 108.5% կատարողական: Այլ եկամուտների ծրագրի կատարումը հիմնականում ապահովվել է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց վճարվող տոկոսավճարների, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների

գերազանցումից մուտքերի և իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների հաշվին, որոնք գերազանցել են իննամսյա ծրագրային ցուցանիշները համապատասխանաբար 25.8, 19.7, 60.1 և 6.9 տոկոսով: Ի տարբերություն նշված եկամտատեսակների, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների իննամսյա ծրագիրը կատարվել է 92.3%-ով (առանց արտաբյուջետային միջոցների՝ 96.8%-ով)՝ կազմելով շուրջ 15.2 մլրդ: Շուրջ 4 մլրդ դրամ է մուտքագրվել իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից՝ կազմելով իննամսյա ծրագրով կանխատեսված ցուցանիշի 84.4%-ը, առանց արտաբյուջետային միջոցների՝ 97.5%-ը: Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 31 մլն դրամ է կազմել տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից մուտքերը, որոնց իննամսյա ծրագիրը կատարվել է 21%-ով, առանց արտաբյուջետային միջոցների՝ 57.6%-ով: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտները նվազել են 14%-ով կամ 4.5 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների նվազմամբ:

<u>ՀՀ պետական բյուջեի ծախսերը</u>

2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 7%-ով կամ 37.1 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակների, այլ ծախսերի, պայմանագրային ծառայությունների ձեռքբերման, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի, դրամաշնորհների և պետական պարտքի սպասարկման ծախսերի աճով:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 510.5 մլրդ դրամ՝ 82.7%-ով կատարելով իննամսյա ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.8%-ով կամ 32.5 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 47.7 մլրդ դրամ տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, 3.3 մլրդ դրամ՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներին, որոնք կազմել են իննամսյա ծրագրի համապատասխանաբար 85.9%-ը և 79.2%-ը: Նախորդ տարվա հունվար-օգոստոս

ամիսների համեմատ նշված ծախսերն աճել են համապատասխանաբար 6%-ով և 4.8%-ով: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից օգտագործվել է 103.1 մլրդ դրամ, որը կազմել է իննամսյա ծրագրի 81.6%-ը և 6.5%-ով գերազանցել նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 23.3 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով ինն ամսվա ծրագրի 80.2%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից շուրջ 14.9 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 8.5 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: Պետական պարտքի սպասարկման ծախսերը 18.5%-ով գերազանցել են նախորդ տարվա նույն ցուցանիշը, որը տեղի է ունեցել հիմնականում ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճի հաշվին: Պետք է ընդգծել, որ գնաճի դեմ պայքարի շրջանակներում ֆինանսական շուկայում դիտարկվող տոկոսադրույքների ընդհանուր աճի միտումը գրեթե չի անդրադառնում պետական պարտատոմսերի եկամտաբերության վրա, քանի որ միջին և երկարաժամկետ առումներով դրամական շուկայի մասնակիցների կողմից շարունակում են դիտարկվել որպես ներդրման ամենակայուն և հուսալի միջոց:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 12.2 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով իննամսյա ծրագրի 86.4%-ը և 4.3%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

62.9 մլրդ դրամ են կազմել պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները, որից 61.7 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 1 մլրդ դրամը՝ միջազգային կազմակերպություններին և 179 մլն դրամը՝ օտարերկրյա կառավարություններին: Մասնավորապես՝ համայնքների բյուջեներին տրամադրվել են 21.6 մլրդ դրամի դոտացիաներ, որոնք պահպանվել են նախորդ տարվա մակարդակին: Դրամաշնորհների իննամսյա ծրագիրն ընդհանուր առմամբ կատարվել է 85.8%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.1%-ով:

2011 թվականի հունվար-օգոստոս ամիսների պետական բյուջեի ծախսերի 29.9%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են 169.6 մլրդ դրամ, ընդ որում ապահովելով ութ ամսվա համար ներկայացված բոլոր պարտավորությունների կատարումը և արձանագրելով իննամսյա ծրագրի 84.1% կատարողական ու 8.3 մլրդ դրամով կամ 5.1%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: Մասնավորապես՝ նշված գումարից 125.9 մլրդ դրամ (85.6%) են կազմել կենսաթոշակները, 43.7 մլրդ դրամ (80.1%)՝ նպաստները:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի միջոցներից 88.4 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ կազմելով իննամսյա ծրագրի 78.2%-ը և 7.6%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները հունվար-օգոստոս ժամանակահատվածում կազմել են 56.4 մլրդ դրամ կամ ծրագրի 68.7%-ը: Մասնավորապես՝ 57.8 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, որոնց ինն ամիսների ծրագիրը կատարվել է 68.6%-ով: 1.4 մլրդ դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ կազմելով իննամսյա ծրագրի 64.2%-ը: Նախորդ տարվա հունվար-օգոստոս ամիսների համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշն աճել է 8.8%-ով՝ հիմնականում պայմանավորված շենքերի և շինությունների վրա կատարված ծախսերի աճով:

<u>ՀՀ պետական բյուջեի պակասուրդը</u>

2011 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ պետական բյուջեն կատարվել է շուրջ 14.8 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով ինն ամիսների համար նախատեսված 72.1 մլրդ դրամի ընդամենը 20.5%-ը: Նշենք, որ նման ցուցանիշը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ իննամսյա ծրագրով նախատեսված պետական բյուջեի ազատ միջոցներից 58.4 մլրդ դրամ օգտագործելու փոխարեն հունվար-օգոստոս ժամանակահատվածում օգտագործվել է 12.2 մլրդ դրամ: Անցած ժամանակահատվածում պետական բյուջեի պակասուրդի ներքին ֆինանսավորումը կազմել է 14.4 մլրդ դրամ, արտաքին ֆինանսավորումը՝ 340.4 մլն դրամ:

Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում 7.8 մլրդ դրամ են կազմել փոխառու միջոցները, 6.6 մլրդ դրամ՝ ֆինանսական ակտիվները: Մասնավորապես՝ 8.6 մլրդ դրամ է ստացվել գանձապետական պարտատոմսերից՝ կազմելով իննամսյա ծրագրի 60.1%-ը: Մուրհակների մարման նպատակով իննամսյա ծրագրով նախատեսված վճարումները կատարվել են 56.4%-ով՝ կազմելով 93.5 մլն դրամ: 716 մլն դրամ է հատկացվել ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի մարման նպատակով, որը կատարվել է իննամսյա ծրագրով նախատեսված ծավալով: Անցած ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 10.6 մլրդ դրամի վարկեր՝ կազմելով իննամսյա ծրագրի 92.9%-ը: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը 2009 թվականին տրամադրված պետական վարկի

միջոցներից ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 10.5 մլրդ դրամի վարկեր, որից 1.0 մլրդ դրամը՝ տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի 1-ին բաղադրիչի ֆինանսավորման նպատակով՝ «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի շրջանակներում, 7.5 մլրդ դրամը՝ կայունացման դեպոզիտային հաշվի միջոցներից գյուղատնտեսական վարկերի տրամադրման նպատակով, շուրջ 936.7 մլն դրամը՝ «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով մարդատար տրանսպորտային միջոցներ ներմուծող ֆիզիկական անձանց, 1.0 մլրդ դրամը՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից հիմնադրված վարկային կազմակերպությանը, «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ին՝ 50.6 մլն դրամ: Տեղական կենսապարարտանյութերի արտադրությունը խթանելու նպատակով անցած ժամանակահատվածում 50 մլն դրամ է տրամադրվել «ՍԻՍ-95» ՍՊԸ-ին: 19.8 մլն դրամ արտոնյալ պայմաններով տրամադրվել է բռնադատված քաղաքացիներին՝ անհատական բնակարանային շինարարության վարկավորման նպատակով: 5.0 մլրդ դրամ ստացվել է տրամադրված ներքին վարկերի վերադարձից՝ կազմելով իննամսյա ծրագրի 93.2%-ը: Հաշվետու ժամանակահատվածում 30.1 մլն դրամ է տրամադրվել բաժնետոմսերում և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերման նպատակով, որը կատարվել է իննամսյա ծրագրով նախատեսված ողջ ծավալով:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը կազմել է 340.4 մլն դրամ: Մասնավորապես՝ արտաքին աղբյուրներից ներգրավվել են 26.6 մլրդ դրամի փոխառու միջոցներ, -26.3 մլրդ դրամ է կազմել ֆինանսական ակտիվների ցուցանիշը: Հունվար-օգոստոս ամիսների ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել են շուրջ 33.0 մլրդ դրամի վարկային միջոցներ: Ավելի քան 6.3 մլրդ դրամ ուղղվել է արտաքին պարտավորությունների մարմանը, որից շուրջ 4.0 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը: 1.1 մլրդ դրամ է տրամադրվել Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 618.5 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 140.5 մլն դրամ՝ ԳԶՄՀ, 115.8 մլն դրամ՝ ՎԶԵԲ, 59.7 մլն դրամ՝ ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի նկատմամբ ունեցած պարտքի մարմանը, 22.1 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման

համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը, 250.3 մլն դրամ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության նկատմամբ պարտավորությունների մարմանը:

2011 թվականի հունվար-օգոստոս ամիսներին 25.1 մլրդ դրամ միջպետական վարկ է տրամադրվել ԼՂՀ-ին: Վրաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների գծով կատարվել է 248.3 մլն դրամի վճարում՝ կազմելով իննամսյա ծրագրով նախատեսվածի 124.6%-ը: Ստացված գումարից 49.1 մլն դրամը նախորդ տարվա պարտավորությունն է և Վրաստանի կողմից փոխանցվել է 2010 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է ընթացիկ տարվա հունվար ամսին: Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերմանն ուղղվել է 799.4 մլն դրամ՝ կազմելով իննամսյա ծրագրի 87.8%-ը: Հաշվետու ժամանակահատվածում 630.3 մլն դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված արտաբյուջետային դրամաշնորհային միջոցների մնացորդը: